788 Ես մենավոր եմ, ես մեղավոր եմ,

1. Ես մենավոր եմ, ես մեղավոր եմ,
Առանց Հիսուս, ա՜խ, ես անզոր եմ:
Մոլորված եմ, Տե՛ր, ես լքված եմ,
Հիսո՛ւս, անհույս եմ, Հիսո՛ւս, անուժ եմ առանց Քեզ:

Սիրտն իմ բաբախում է միայն Քեզ համար,
Անունդ շուրթիս կանչում եմ, Հիսո՛ւս, իմ Արքա:
Դու ես իմ սերը, Դու՝ իմ Տերը,
Հրաշագործ իմ Աստված:
Բացել եմ սրտիս դռները, Հիսո՛ւս, ներս արի,
Ես եմ մոլորված գառնուկդ, ինձ օրհնի՛ր, ների՛ր,
Դու ես իմ սերը, Դու՝ իմ Տերը, իմ Աստված:

2. Մեծ է Քո սերը, ով Փրկիչ Տերս,
Լուսավորի՛ր ինձ, զորավոր Տերս,
Մեղավոր եմ ես, մենավոր եմ,
Հիսո՛ւս, անհույս եմ, Հիսո՛ւս անուժ եմ առանց Քեզ: